

ՅԱԻԵԼՈՒԱՄ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ., ՄԱՅԻՍ.

ԱՅՍ ԹՈՒՂԹ ԵՈՒԱՆՆՈՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԵ Է

ԱՌ ԱՐԱՍ ԱՂՈՒԱՆՆԻՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սրբոյ եւ աստուածասիրի երանելոյ հոգեւոր եղբօր եւ պաշտօնական մերոյ Արասայ եպիսկոպոսի Աղուանից՝ Ի Յոսաննէ եպիսկոպոսապետէ Շրուսաղէմի: Աստուածասէր Թուամաս երանելոյ Պանափանայ վանական, ըստ սովորութեանն՝ որպէս յառաջ քան զմեզ յաջորդեալքս՝ աթոռոյն Եպիսկոպոս Եղբօր Տեառն առեալ էր զիր հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ նոյնպէս եւ ի մէջ խնդրեաց եւ մատոյց տօմարս երկուս ժողովոյ, որ առանց Զրիստոսի ժողովեալ էր ի Հայս հակառակ սրբոյ Եկեղեցւոյ, եւ զանձինս իւրեանց ի ժառանգութենէն Զրիստոսի ի բաց հանին. զմին՝ զոր առաքեալ իսկ էր ի ձեր աշխարհդ, զի որդայթեցան զձեզ յիւրեանց կորուստն, եւ զմիւսըն սահման հաւատոյ իւրեանց ամբարշտութեանն, յորում եւ ուսոյց զմեզ վասն բարեսէր կամաց Երանութեան Զումմէ եթէ ընդ բարեք ճանապարհ հաւատոյ եւ գործոյ ընթանաս. զոր մեր լուեալ՝ յոյժ ուրախ եղաք: Բայց լուաք, թէ ոմանք յիշխանութենէդ Զումմէ ընկալան զայնպիսի սնտոի եւ ստեղծական բանս խաբէութեան եւ Սրբութիւնըդ Զո ոչ ել ի վերայ նոցա: Ոչ գիտես, եթէ զամենայն իրս առաքինութեան որ գործիցէ եւ նախանձ ոչ ունիցի՝ ոչ է կատարեալ սէր ի նմա. զի կատարեալ սէր ի բաց մերժէ զերկեզ եւ նախանձեցուցիչ առաւելեալ սիրոյ առ Աստուած, որպէս Փենեհէզին եւ Եղիայն, որ վասն նախանձուն Աստուծոյ զովեցան ի Տեառնէ, որ ասաց իսկ ինքն, եթէ Ծա Աստուած նախանձոտ եմ եւ զգիտու իմ այլում ոչ տամ եւ ոչ զքաջութիւնս իմ գորշկոց: Արդ մեր որ ըստ նմանութեան Աստուծոյ արարաք, պարտիմք զԱրարչին մերոյ ունել զնախանձ, որպէս ս. Պօղոս ասէ, եթէ Երանանաւորք լերուք գործոց բարեաց, եւ ոչ է արժան տալ զգիտուս Աստուծոյ Եւտիքի եւ Եւսերի եւ Պետրոսի Անտիոքացւոյ եւ Յուլիանոսի Աղիկառնացոյ, եւ ոչ զքաջութիւն Աստուծոյ Արդիշոյն Ասորոյ, որ եղև առաջնորդ կորստեանն Հայոց եւ կամ ժողովոյն Հայոց: Հայեաց եւ

տես, թէ որպէս Հեղի եւ աղզն նորա մերժեցան յերեսաց Աստուծոյ ի քահանայանալն նրմա: Եւ դարձեալ զի ասէ, թէ վայ որ գործէ զգործ Տեառն հեղգութեամբ, եւ դարձեալ զթաղաւորացն իսրայէլի որպէս ասէ, թէ Արարին ուղղութիւնս առաջի Աստուծոյ, սակայն ի բարձանց ոչ մեկնեցան, զի տակաւին ժողովուրդն զոհէր ի բարձունս եւ խուսկս արկանէր թոյլ տալ թագաւորացն ժողովրդեանն զոհել ի բարձունսն, եթէ կցորդք են մեղաց նոցա: Բանդի Պօղոսի գնոյն երկեղկալեալ յանձին ասէր, թէ Անպարտ եմ ես յարենէ ձերմէ, քանզի ոչ խորշեցայ պատմել ձեզ զամենայն կամս Աստուծոյ: Եւ դարձեալ ասէր. Զգոյշ լերուք ի շանց անտի, զգոյշ լերուք ի չար մշակաց անտի, որ զան առ ձեզ զգեստուք ոչխարաց եւ ինքեանք են դայլք յափշտակողք: Երևնս կոշեաց զայնպիսին վասն լրբութեան նոցա եւ անառակութեան, եւ զայլս կոշեաց վասն յանդգնութեան նոցա: Ըար մշակս վասն զի նենգեն զբանն Աստուծոյ, եւ զգեստուք ոչխարաց, որպէս թէ կերպարանօք ճըլմարտութեան, որ զչար որոմունս մշակութեան իւրեանց մինչեւ այսր սերմանեցին: Զորս եւ նզովեցի եւ հալածեցի եւ քաղաքս դեռ այրել զվանսն մի հայոց, մինչեւ հալածեալքն առ թագաւորն գնացին ասելով, եթէ հալածեաց ըզմեզ հայրապետն Երուսաղէմի, իսկ Բարեպաշտութիւն Նորա զրեաց առ մեզ, եթէ բարիք արարեր ըստ կանոնաց զիրսդ խնդրելով, զի եթէ այդպիսեացդ թոյլ որ ասցէ իւրեանց ամբարշտութեան, եւ այլ ճարակ աստ գտանեն, զոր դժուար որ կարէ ուղղել՝ մանաւանդ զարտաքին աղդդ, որ ոչ կարեն իմանալ զմիտս գրոց եւ ըստ յառաջընկալ սովորութեան իւրեանց զարափառութիւն իրեւ զբարեպաշտութիւն համարին: Այլ եւ հերձուածդ իսկ հայոց անգլուխ է եւ ընդ բազում հերձուածքս միաւորի: Եւ իբրեւ ի գրոց ինչ ոչ կարացին ցուցանել իշխանքն հայոց, առ իս աղաչանս առաքելցին, եթէ առաջին թագաւորքն զվանս զայն մեզ իբրեւ զպարգև շնորհեցին նովմք ուսմամբն: Որոց արարի պատասխանի, թէ անհնար է թագաւորաց հերձուածս պարգև շնորհել: Եւ ապա իբրեւ ոչինչ եւս գտեալ լըռեցին: Բայց դու իմով հրամանաւ զհերձուածողսդ հան եւ զվանսդ ուղղափառաց տուր, եւ յեկեղցն, որք կամեն ըստ եկեղեցւոյ լինել, եթէ եւ ձեռնագրաւ զհերձուածսն նզովեն՝ մի արգելուք, այլ սիրով ընկալարուք քանզի տրգեալք են: Այնպէս եւ ի հայրապետէ նորա զիր ընկալայ, եթէ բարեպաշտ թագաւորս մեր ինձ ասաց, եթէ վասն եկեղեցւոյ իրաց զիս աշ-

խառ զի՞ առն՝ ք. մեզ արտաքին իրաց և պատերազմաց է հոգալ, եկեղեցոյ և ճշմարիտ հաստոյ գործ եպիսկոպոսաց է՝ քննեցէք և հաստատուն պահեցէք և զիս և զաշխարհս:

Դսկ ես կոչեցի զիշխանս հայոց և բազում ինչ խօսեցայ և նոքա զնեսարիա կալան բարութս. և ես ասեմ թէ նեսարիայն հաճոյ է ձեզ, երթայք ի նեսարիայն կացէք. բայց յերկուս քաղաքս թագաւորականս յայտնի հերձուածողի ոչ տամք բնակել՝ ի յԵրուսաղէմ՝ Երկնաւոր Թագաւորին և մերս երկրաւոր, և վասն այլ տիեզերաց իւրաքանչիւր եպիսկոպոսունք դատապարտին, եթէ անփոյթ առնեն: Եւ ապա հայք հաղորդեցան և եթէ մնայ որ՝ հաղորդիլ ունին: Բայց Դու տէ՛ր, ըստ թագաւորի հրամանին զվանսդ կարգաւորեա և մաքուր պահեա՛ զքաղաքսդ, և ես նոյնպէս կարգաւորեցի, որպէս թագաւորն հրամայեաց. այլ և այլ վանդեայսդ որ ի քաղաքիս և որ արտաքոյ, զոր միանգամ ծանուցին՝ ըստ եկեղեցոյ կարգաւորեցի: Եւ ես թէպէտ և չյօժարէի յայլոց ի թագաւորութիւն այդպիսի ինչ գրել, բայց յորժամ չարալուր զիրն հայոց ի լսելիս իմ՝ եհաս, հարկաւորեցայ գրել. քանզի մեզ զահս Տեառն գիտելով չափ, ով եղբարք, ոչ է պարտ ծուլանալ և թոյլ տալ. քանզի ասէ. ԱՅ մեծ է սնկանել ի ձեռս Աստուծոյ կենդանոյ, Վասն զի դէտ կացոյց զմեզ Աստուած ի վերայ տանն Խորայելի. ապա եթէ դէտն ոչ աղաղակեացէ և ոչ զգուշացուցանիցէ՝ զարիւն նոցա ի ձեռաց դէտին խընդրեցից: Արդ, մի՛ եղբարք պարտական արեան դտցուք յաւուրն յայնմիկ, յորժամ բանք սպառին և դործք թագաւորնոյ, այլ մանաւանդ ըստ Պօղոսի, որպէս վերագոյնն ասացաք, թէ Անպարտ եմ ես յարեւել, ձերմէ, քանզի ոչ խորշեցայ պատմել ձեզ զամենայն կամս Աստուծոյ: Զայս աղերսելով ասէր Պօղոս. իսկ դարձեալ և սաստիւք ասէ. Եանդիմանեա՛ սաստեա, միսիթարեա ամենայն սաստիւ, զի մի որ իցէ, որ զքո մանկութիւնդ արհամարհիցէ:

Նոյնպէս և Սրբութեանդ Զերոյ պարտ է հովուել և վարդապետել զհաւատացեալ ձեզ յԱստուծոյ հօտք ամենայն զգուշութեամբ: հայել ի պատուիրանս Աստուծոյ և քննել զգիրս սուրբս, որպէս և Տէրն ասաց, թէ Քննեցէք զգիրս և տեսէք, յորս համարիք ունել զկեանսն յաւիտեանից: Եւ դարձեալ առաքեալն ասէ. թէ Հանապաղ քննէին զգիրս և տեսանէին, թէ այս այսպէս իցէ. և ոչ որպէս հայրդ առանց քննելոյ զպատուիրանս Աստուծոյ՝ անկան ի վախից և հեռացուցին զան-

ձինս իւրեանց ի միաբանութենէ եկեղեցոյ և աւտարացան ի շնորհացն Աստուծոյ: Արդ, դուք եղբարք, զհետ երթայք սուրբ Եկեղեցոյ և մի յաջ և մի յահեակ խոտորիք՝ ունելով զհաւատս սուրբ Եկեղեցոյ, զոր ուսայք ի սուրբ առաքելոյն և ի նորին աշակերտացն՝ մինչև ի մեր ժամանակս անվրէպ և անսխալ: Զի թէպէտ և հերձուածք եղեն բազում ի յաշխարհի, որպէս և Պաւղոս ասէր, եթէ Հերձուածք լինելոց են՝ զի ընտիրքն երեւսցին. և դարձեալ Պետրոս ասաց, եթէ Որպէս սիրելի եղբայրն մեր Պաւղոս, ըստ տուեցելոյ նմա իմաստութեան, բազում ինչ դժուարեմացս ասաց ի թուղթան անդ իւրում, զոր ահուսումքն և յողորդքն կամակորեն առ ի կորուստ անձանց, Դսկ մեք, այսինքն սուրբ Եկեղեցի, զայս տէրութեան ձայն ունիմք, որ ասաց ցՊետրոս՝ զուրիս առաքելոցն, տալով նրմա զզխաւորութիւն հաւատոյ անշարժութեան եկեղեցեաց, թէ Դու ես վեմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ՝ և դրութեմք մի յողթահարեացն զդա. որում և զփականս երկնի երկրի ետ՝ Պետրոսի, և որ մինչև ցայսօր ժամանակի զհաւատոց նորա և զհետ երթան աշակերտք նորա և վարդապետք կաթողիկէ եկեղեցոյ, կապեն և արձակեն. զչարսն կապեն, և որ գան յապաշխարութիւն և ի զղջումն՝ արձակեն ի կապանաց. մանաւանդ սուրբ և զխաւոր և պատուական աթոռոյն նորա ժառանգորդք ուղիղ հաւատովք անսխալ ըստ տէրութեան ձայնին, որպէս յառաջագոյն ասացաք, որոց հօտք են այստեղիկ:

Հաւատամք ի Հայր և յՈրդի և ի Հոգի սուրբ Աստուած ճշմարիտ. խոստովանիմք մի էութիւն, որ է մի բնութիւն, երեք անձինք, երեք դէմք, երեք կերպարանք՝ Հօր և Որդոյ և Հոգոյն սրբոյ. միաւորեմք զԱստուածութիւնն, զտէրութիւնն, զանսկզբնական զօրութիւնն, որոշեմք զառանձնաւորութիւնն: Զի Հայր Աստուած է և արարիչ և ամենակալ, անսկիզբն և անպատճառ, ծնող և ոչ ծնունդ: Եւ Որդի Աստուած է և Արարիչ և ամենակալ, անսկիզբն՝ ծնունդ և ոչ ծնող, որոյ պատճառք Հայր, անձառապէս Աստուած Բան: Եւ Հոգի սուրբ Աստուած է և Արարիչ և Ամենակալ, ընդ Հօր և ընդ Երդոյ, ելող Հոգի սուրբ և միսիթարիչ: Այսպէս խոստովանիմք վասն Հօր և Որդոյ և Հոգւոյնսրբոյ աստուածութեանն: Դսկ վասն տնտեսութեան Տեառն մերոյ Երուսաղիմիստոսի այսպէս խոստովանիմք. զՈրդի ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանսան անձառապար, իսկ ի վերջին ժա-

մանակս վասն մեր և վասն մերոյ փրկութեան մարմնացեալ և մարդացեալ ի Մարիամայ սրբոյ կուսէ Աստուածածնէ, և լեալ մարդ կատարեալ՝ Աստուած ճշմարիտ և զերկօսեան զրնութիւն՝ զաստուածութեան և զմարդկութեան, անշփոթ պահեալ ի միում անձին և ի միում կերպարանի, որ կոչի մի Տէր մեր Յիսուս Բրիստոս, Որդի Աստուծոյ կենդանոյ չարչարեալ և խաչեալ մարմնով և անմահութեամբ անչարչարելիս— Զայս հաւատս հաստատեցին միաբանութեամբ սուրբ հարքն չորից ժողովոց, այսինքն որ ի Նիկիա ՅԺԸ, եպիսկոպոսք և որ ի Կոստանդնուպոլիս ՅԺԻ և որ ի յԵփեսոս առաջին ժողովն Մ, և որ ի Զադկեդոն ՈՂ, սուրբ հարքն Եւ վասն զի հայք յասորեաց խորեցան, որ ելին արտաքոյ սրբոյ Եկեղեցւոյ վասն նշովիւղ նոցա զսուրբ Ժողովն Քաղկեդոնի և անկան յաղանդն Յուլիանոսի Աղիկառնասացոյ, որէ և սա ի բուսոյ որոմանն Դեոսկորի և Եւսիքի և Թէոփրոսի, զի սոքա երեքեան ի միում ժամանակի զմի ամպարշտութիւն քարոզեցին, որք և նշովեցան իսկ ի ժողովոյն որ վասն նոցա և վասն ասելոյ նոցա թէ զմարմինն Տէրն յերկնից երբեք և ոչ ի կուսէն ինչ առ ամենեւին այլ լոկ միայն ճանապարհորդեաց ընդ նա: Իսկ այլքս որ ի սոցանէ բուսան, այսինքն Տիմոթէոս Եղորոս և Պետրոս ծանրախօս, զոր Աղեքսանդրացի հայրապետս կոչեն, որք աքսորեցան վասն չար ամպարշտութեան իւրեանց և մերժեցան ի ժառանգութենէն Բրիստոսի: Եւ դարձեալ Գայիոս ևս երեք և Պետրոս Աստիղացի և Յուլիանոս Աղիկառնասացի, որք նորաձե իմն մուծին յաղանդն Եւսիքի որպէս զի ցուցցեն զանձինս իւրեանց առ ի չար անդրք առաւել իմաստունս և եղեն պատճառք կորստեան անձանց իւրեանց և աշխարհի, զորոյ բարբաժմունս՝ որով այժմ հեռացան հայք յեկեղեցւոյ ասացուք: — Եւ յիսանոս Աղիկառնասացի ամբարշտեաց ասել թէ մարմինն Բրիստոսի անապական և անմահ էր մինչև ցիտալութիւնն՝ որպէս յետ յարութեանն էր անապական և անմահ, նոյնպէս և յառաջ քան զյարութիւնն և մի բնութիւն ասաց Բանին և մարմնոյն Աստուծոյ, և շփոթումն և զանկումն և խառն անկումն արար և զամենայն յոյս հաւատացելոց, որ ի ձեռն սուրբ խաչին եղե՛, ուրացաւ: Զի թէ անմահ և անապական էր մարմինն Բրիստոսի որպէս ասացին՝ անմահութեամբ ուրացաւ զչարչարանն և անապականութեամբն զյարութիւնն, զի ուր մահ չէ՛ և ոչ խաչ է, և ուր անապականութիւն՝ յարութեան պէտս ոչ ունի: Ղանս

զի յարութիւն է, որ զապականացուն անապական առնէ, որպէս առաքեալ ասէ, թէ Պարտ է ապականացուիս զգնեալ զանապականութիւն և մահականացուիս զանմահութիւն: քան զի ոչ նոյն ինքն է ապականացու բնութիւն և անապական, այլ ասեմք, եթէ միայն առանձին պատշաճ է Աստուծոյ բնութեանն և բովանդակ անապական և անշրջելի և անայլայելի՛ և միշտ նոյնպէս ունի հանապազ, ոչ բարձումն և ոչ վերադրութիւն ունի և անընդունակ է ակտից և մարմնաւոր չարչարանաց և մահու, զի բաւանդակ անապական է Աստուծոյ բնութիւն, այսինքն սրբոյ և երկրորդագելի միասնական սուրբ Երրորդութեան, ըստ առաքելոյ որ ասէ. թէ Բայց թագաւորին յաւիտենից՝ անապականին և աներեւոյթին, միայնոյն Աստուծոյ պատիւ և փառք յաւիտեանս:

Իսկ ապա եթէ ասիցես. և ոչ մի ինչ պատիւ Բրիստոսի առաւել քան մեզ ոչ տայցեմք այս ոչ մեր ինչ է շնորհեալ Տեսուն Բրիստոսի, քանզի ոչինչ է կարօտս բայց ըստ ճշմարտութեան բանիցն ասեմք, թէ վերագոյն քան զմեզ է մարմինն Տեսուն և ըստ մեզ ամենեւին առանց մեղաց. վերագոյն քան զմեզ անմեղութեանն և միաբանութեան աստուածութեանն, քանզի ի սմանէ միաւորութիւն տնօրէնութեան և ապա աստուածային և երկրպագելի. իսկ ընդունելութեանն անխտեի ակտից՝ ըստ մեզ էր ըստ ամենայն, մինչև ի փրկական չարչարանս իւր և ի յարութիւն: Իսկ զսուրբ և զտիեզերական ժողովն Քաղկեդոնի, զոր նշովեցին հայք, որք մոլորեցան ի ձեռն Արքեւոյի ասորոյ և ելին արտաքոյ սուրբ և կաթուղիկէ եկեղեցւոյ՝ վասն ասելոյ սուրբ ժողովոյն զտէր մեր Յիսուս Բրիստոս Աստուած կատարեալ և մարդ կատարեալ, Աստուած ճշմարիտ և մարդ ճշմարիտ և յայտնապէս ցուցին զտնօրէնութեանն խորհուրդ, զոր և սուրբ ժողովն, որ վասն տնտեսութեան Տեսուն մերոյ Յիսուսի Բրիստոսի ասացեալ է ի սուրբ հաւատս՝ զնոյն բանս եղից այնպէս: Արդ, զհետ երթալով այժմ զսուրբ հարցն մեք՝ և զնոյն խօստովանել Որդի և Տէր մեր Յիսուս Բրիստոս համաձայն ամենեքեան ուսուցանեն՝ կատարեալ զնոյն ինքն յաստուածութեան և կատարեալ զնոյն ինքն ի մարդկութեան, Աստուած ճշմարիտ և մարդ ճշմարիտ, նոյն ինքն ի հոգոյն բանականէ և ի մարմնոյ և հաւասար չօր ըստ աստուածութեան և հաւասար նոյն ինքն ըստ մարդկութեանս՝ ըստ ամենայնի նման մեզ, առանց մեղաց. որ յառաջ քան զյաւիտեանս ի չօրէ

ծնեալ բառ աստուածութեան, ի վերջին ժամանակս ի Մարիամայ ի կուսէ ըստ մարդկութեանս, մի զՏէր Յիսուս Բրիստոս յերկուս բնութիւնս՝ զՄիածինն, անշփոթելիս, անշրջելիս, անբաժանելիս, անմեկնելիս ծանուցեալ, և ոչ ուրեք բնութեանցն զանազանութիւն ի բաց բառւալոյ վասն միութեանն, այլ ողջ պահելով զերկաքանչիւր բնութիւն ի միում գէմս՝ ի մի անձն զուգապէս, ոչ յերկուս գէմքս բաժանելով, այլ մի գնոյն Որդի Միածին Աստուած Բանն՝ Տէր Յիսուս Բրիստոս, Զայս խոստովանութիւն ասացեալ է վասն անտեսութեան Տեսա՛ն մերոյ Յիսուսի սուրբ ժողովոյն որ ի Մարկեոսի զօր և զգիր հաւատոյն առաքեցաք Սրբութեանդ Զերում:

Իսկ վասն երկուց բնութեանցն, զոր ասացին սուրբ հարքս այսօքիկ, ոչ նորաձեւութիւն ինչ մօժին յեկեղեցի սուրբ, այլ որ ի սկզբանէն քարոյեալ էր ի սուրբ առաքելոցն և ի նոցին հետեւողացն, ի վարդապետաց եկեղեցոյ՝ գնոյն յայտնապէս ցուցին: Բանգի ասացին երկուս բնութիւնս միաւորեալս ի Տեսողն մերում Յիսուսի Բրիստոսի, ասեն անբաժանելիս, բայց ծանուցեալ և անշփոթս, քանզի որ զերկուս բնութիւնսն ոչ ամբողջ պահեցէ ի Տեսողնէն, այլ զմինն միայն խոստովանի՝ ամենայն իրօք զմիւսն ուրանայ: Այլ ասիցես արդեաւք, զիմիդ հնար է երկուս, որպէս Աստուածաշունչ գիրք ասացին՝ այսինքն ստացականին և անստացականին, քանզի մարմինն ստացական էր, իսկ Աստուածութիւնն՝ անստացական, և ինքն իսկ Տէրն ցուցանէ զերկուս բնութիւնն յինքեան՝ յայտնապէս ասելով վասն աստուածութեանն, եթէ Ես և Հայր իմ մի եմք, և դարձեալ, եթէ Մի դարմանայք, եթէ Որդի Մարդոյ է, զի եկեցէ ժամանակի զի լսիցեն մեռեալք ձայնի Որդոյն Աստուծոյ, եւ որ ի կարգի: Իսկ վասն մարդկային բնութեան թէ Պարտ է Որդոյ Մարդոյ բաղում չարչարիլ, և դարձեալ, եթէ Զի խնդրէք զիս՝ այր որ զձմարտութիւնն ձեզ խօսեցայ: Զուգարարբառ այսոցիկ քարոզն աշխարհի և առաքեալն Պաւլոս զերկուս բնութիւնսն Տեսա՛ն ի մի գէմս նշանակէ՛տա՛ն: Որ ի կերպարանս Աստուծոյ էր, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զինն չաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ: Արդ ո՞ր զկերպարանս ծառայի զինքեալ զորոյ զբնութիւնն ի բաց ուրանալով համարձակի ասել՝ Անմահ խաչեցար, և անուանին հոգեմարտք և աստուածաշարք: Բայց ձեզ ոչ է պարտ զհետ մտորեստանեացդ մոյրել, այլ գալ զհետ պատուի-

րանաց տիեզերական եկեղեցոյ սուրբ յարութեանն: Թէպէտ և ոչ գիտութեամբ ունիք զմիտս հերձուածոյդ Դիոսկուրի և զԱնտիոքացոյն, որ զանմահ խաչեցարդ աւելադրեցին ի սուրբ Երրորդութեան ձայնի և իբրեւ ընդ պատրուակաւ մեծին դաշխարհ ի միտս Եւտիքի հերձուածոյն, և բազումք թէպէտ և ոչ գիտեն զմայր հերձուածոյդ, այլ ունին ի սովորութենէ իբրեւ դուքդ պարտ է ձեզ լսել աշխատաւիրաց յորժամ ծանուցին, եթէ հերձուածողական միտք բանիդ, և ոչ ի գրոց սրբոց: Այլ և ձեզ պարտ է զրել, եթէ յետ ծանուցելոյն, որք ի նմինն կայցեն, և ընդ նոցին հաղորդիցին, որ գիտակաւ զհերձուածն ունիցին, ոչ իբրեւ ազիտաց ներէ Աստուած յաւուրն յանգիմանութեան, այլ ընդ հերձուածոցօքն և ընդ հակառակորդօքն դատի զնոցունց ձայնակիցսն:

Այլ պարտ է ձեզ լսել Պաւլոսի, որ ասեն, և զնոյն ձայն փառարանել, եթէ Ոչինչ եդի ի մտի գիտել ձեզ, բայց միայն զՅիսուս Բրիստոս և զնոյն ի խաչ ելեալ, և դարձեալ, եթէ Յիսուս Բրիստոս գրեցաւ ի խաչ կշանել: Զսոյն և երանելի առաքեալն Պետրոս ասէ, եթէ Բրիստոս չարչարին մարմնով վասն մեր, թէպէտ և մեռաւ մարմնով՝ կենդանի է հոգով: Եւ սուրբ աւետարանն ասէ, ԶՅիսուս խնդրէք՝ զՆազովրեցի զխաչեցեալն, և ոչ որ ասաց զանմահ հոգին չարչարեալ և մեռեալ, այլ զՆազովրեցին, զոր ի մէնջն էաւ և ընդ իւր միաւորեաց անբաժանելի, և ամենայն պատուիրանքս այսմ վկայեցին, եթէ Բրիստոս մարմնով իւրով չարչարեցաւ և մեռաւ, ոչ որ զանմահ հոգին ասաց չարչարեալ և մեռեալ մանիքէտարար: Բանգի բազում ի միտս արկանէ հերձուածոյ աւելադրութիւն բանիդ, բայց ձեզ պարտ է զսրբոյ աւետարանին զհետ երթալ և մի յաջ և մի յահեակ խոտորել, և ոչ գրոյս մերում կարօտանալ, զի ի Ճշմարիտ ի հաւատս ոչ բռնութեամբ ինչ վայել է ածել, այլ կամօք խնդրել վասն երկեղի գեհնին: Զի ահա և ի մերում քաղաքիս զբռնանին հրէսք և հեթանոսք, և քանզի զրոյս տեսանեն և խարխափին՝ մեք ոչինչ բռնութիւն ասնեմք չկամողացն ի վերայ զի աւր է, որ խնդրէ և դատի: Բայց վասն Զո Երանութեանդ լուսք, եթէ կամակից ես բարեւոյ և ընկալար թուղթս երկուս ի Մակարայ և յԵւսոքոքայ ի ձեռն բարեպաշտի և աշխատասիրի թուամասու, որ ոչինչ պէտա ունի ի ձէնջ պատուի և մեծութեան, բայց միայն ոգոց ձերոց փրկութեան, վասն որոյ և զիս թախանձեաց զրել ըստ օրինակինոցաւ որ յառաջ քան զմեզ էին

նախընկալք ամբողջ Եակոբայ առաքելոյ, և ես ինչ ոչ յապաղեցի ծանուցանել զբարեպաշտութիւն կամողացող բարեպաշտութեան: Ոչ միայն զմերս առաքեցաք, այլ և զպատճառս չորից ուղղափառ ժողովոցն գրել հրամայեցաք, զի զիտիցեք, եթէ վասն որոյ հերձուածոց ժողովեցան և զինչ սահմանեցին, և վասն յաւելադրութեան Անտիոքացոյն հրամայեցաք գրել զերանելեաց չորից հայրապետացն՝ զՀռոմայն և զայլոց ուղղափառ եպիսկոպոսաց, որ զԱնտիոքացոյն չարափառութիւնն յանդիմանեցին դրոց վկայութեամբ: Եւ վասն Եուփանոսի Աղիկառնասացոյ հերձուածոյն, որ զմարմինն Բրիստոսի օտարացոյ ի մերմէ բնութենէս և անապականացու անուանեաց մինչև ցիսաչելութիւնն՝ և վասն այսր հերձուածոյ հրամայեցաք գրել զերանելեաց եպիսկոպոսացըն՝ զՀռոմայն և Անտիոքայն զարքեպիսկոպոսացն, Ընդ նոսին և զԹուղթան Կիւրղի արքեպիսկոպոսին, որ զԵնետորի չարափառութիւնն յանդիմանեաց: Զայս ամենայն թարգմանել և գրել հրամայեցաք աշխատասիրի Թուսուս քահանայի և առաքել Բուժ Բարեպաշտութեանդ, զի ոչ միայն իմով գրով, այլ քան զմեզ լաւագունից թղթովք ուսուցանիցես զեպիսկոպոսակիցս Բու, որ զիպող և ճշմարիտ վկայութեամբ են հաստատեալ ի սուրբ աւետարանէն և յառաքելոյն թուղթք նոցա, եթէ որ կամիցի երկեղիւն Աստուծոյ բնորունել: Բայց միայն դու մի թագուցաներ և նենգեր զճշմարիտ վարդապետութիւն եկեղեցւոյ:

Բագում կցորդք են խաչելութեանն Բրիստոսի, որպէս կամին ասել զԲրիստոս խաչեալ, բայց ի սուրբ Երրորդութեանն կարգ, ոչ Բրիստոսի երթայ խաչեցելոյն, այլ անմարմինն և անմահ հոգւոյն ասելն չարչարեալ և մեռեալ և ապա սուտ պատճառեն, եթէ մեք զերեսեանն Որդւոյ ասեմք: Հրեշտակին բարձուն հաւատարիմ է և հարցն առաջնոց և չորից ուղղափառ ժողովոցն, որ զսուրբ Աստուած զՀայր ասացին, սուրբ հօր, զՈրդի և սուրբ անմահ՝ զՀոգին սուրբ: Այլ և ի սուրբ աւետարանին զնոյն գտանէք, եթէ Երթայք մկրտեցէք զաշխարհ յանուն Հօր, և ապա Որդւոյ և ապա Հոգւոյն սրբոյ: Եւ արդ՝ յերիս ձայնսդ մի՛ ինչ յաւելով մի՛ մարմին, մի՛ հոգի, մի՛ խաչ, և մի՛ չարչարանս, զի այդ փառաւորութիւն սրովբէիցն է՝ յառաջ քան զմարդեանալ Որդոյն Աստուծոյ է, որպէս ուսաք յԵսայեայ մարգարէ: Իսկ ուր Որդի միայն փառարանի՝ անդ որպէս կամիս, յիշեալ զմարմնանալն, զխաչիլն, զչարչարիլն և զիր զխաչն անուան Տեառն մերոյ Յիսուսի

Բրիստոսի Որդոյն Աստուծոյ, որ խաչեցան և չարչարեցան և թաղեցան և յարուցեալ վերացաւ՝ անբաժանելի ի Հօրէ: Ապա եթէ յանկարծակի հակառակութիւն որ ի ներքս բերէ՝ յայնպիսեացն յետ մի անգամ և երկիցըս խրատելոյ, հրաժարեալ զի թիւրեալ է, զի զանձնիշխանութիւն մարդոյ, ի բարի կամ ի չար՝ Աստուած ոչ բռնադատեաց, և ոչ որ ի հոգելից մարգարէից կամ յառաքելոց, քանզի ասէ. Բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց, և ապա զան առ իս և ես դատեմ զնոսա: Դոյնպէս և մեք ի մերում քաղաքիս զչկամողն բարեպաշտութեան ոչ բռնադատեմք, այլ միայն զսպասաւորն եկեղեցւոյ զբարեպաշտան կարգաւորեմք: Զայն և Երանութեանդ Բուժ պարտ է առնել, և որ ոչն կամին զոյսն բարեպաշտութեան՝ երթիցեն ի խաւարն հերձուածողաց:

Բայց լուաք, թէ ոմանք յիշխանութենէդ Բուժմէ բարեպաշտից նեղութիւն և հաւածանս հասուցանեն. այդ անօրէնութիւն հեթանոսացն թագաւորացէ, որ Բրիստոսի խոստովանողացն զոհել հարկեցուցանէին, և դուք լսէք և ներէ՛ք այդպիսի անօրէնութեան և ինի՛ք հաղորդք նոցա անօրէնութեանց, որ քառ և մի՛ լիցի. այլ մեծաւ սրտմտութեամբ սաստել այնպիսեացն, զի դադարեցին յայնպիսի անօրէնութենէ, զի ոչ են այնպիսիքն տեսուչք եկեղեցւոյ, այլ գայլք ապականիչք: Եւ Բարեպաշտութեանդ Բուժ ոչ է պարտալ ձեռնադրութիւն առանց մեծի քննութեան, քանզի՛ ուսաք, եթէ միտս ունիս և գիտութիւն և պատիւ և սէր և սաստ ի թագաւորաց, և կարող ես ամենայնիւ ըմբերանել որ ի քէն ձեռնադրեցան՝ և անուղղայս զնայցնել, և ոչ ըստ պատուիրանի սրբոց առաքելոց և աւետարանաց և չորից ուղղափառ ժողովոցն, որոց ճշմարիտ հաւատովք լուսաւորեալ պայծառանայ Կթութիկէ Եկեղեցի: Բայց այլոց աշխարհականաց տգիտաց պարտ է մեղմով վկայել և զբարեպաշտութիւն ճանուցանել, զի մի ասիցեն յաւուր յանդիմանութեան, թէ չգիտեաք և չուսուցիք, և ապա յետ վկայելոյ՝ ի կամս անձին իւրոյ թողուլ ըստ զրեցելումն, զի առանց պատասխանատուութեան դատեցին յարդար Դատաւորէն: — Զայս ամենայն ոչ թէ ուսուցանել, այլ յիշեցուցանել, զիտութեանդ Բուժ կամեցայ, որջ լեր Տերամբ, Բարեպաշտանակից մեր, և մեք որջ եմք յողորմութենէն Աստուծոյ: